

ԿԵՆՍԱՏՈՒ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈԳՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՂԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին տարիներին մարդկանց ավելի ու ավելի մեծ մասի մտահորիզոնը չի տեղավորվում ոչ միայն մեկ առանձին երկրի, այլև ողջ մարդկության և ամբողջ, բայց ընդամենը մեկ մոլորակի սահմաններում: Ձգտում կա ընդլայնելու անձնական աշխարհայացքը և գիտակցությունը մինչև տիեզերքի սահմանները:

Բացի այդ, ինչպես մարդու բնական աշխարհին և մարմնին անհրաժեշտ է մշտական արտաքին եռանդուժի աղբյուր, որը արևն է, այնպես էլ հոգևոր աշխարհին, ոգուն, սրտին անհրաժեշտ են մշտապես մատակարարվող հոգևոր-մշակութային եռանդուժեր կամ ուսմունքներ, տեսություններ, գիտելիքներ, արժեհամակարգեր, բնագաղափարային նոր ուղենիշներ ու ազդակներ, այլ կերպ ասած՝ հոգևոր արևի կենսատու ուժեր:

Իր գիտելիքների սահմաններով տիեզերական չափումների հասնող ուսմունքներից է «Կենսատու բարոյագիտության» ուսմունքը, որը մարդկությանը փոխանցվել է Ռեբիխների ընտանիքի միջոցով: Տիեզերական աշխարհընկալումով խանդավառված գիտնականներն իրենց հետազոտություններում սկսում են կիրառել նոր ուսմունքի գաղափարները և տեսնում դրանց ճշմարտացիության ապացույցները, մանկավարժները կիրառում են դրանք իրենց բնագավառում և դրական դաստիարակչական փորձ ձեռք բերում, արվեստագետները ստեղծագործում են՝ արտացոլելով տիեզերական աշխարհագազոտությունը իրենց գլուխգործոցներում, իմաստասերները տիեզերական աշխարհայացք են ձևավորում կյանքի ճշմարտությունների հայտնաբերման ուղու վրա, և այսպես շարունակ: Այդպես, դանդաղ, բայց հաստատուն քայլերով կենսատու բարոյագիտությունը մտնում է կյանք և նրա առանձին ոլորտներ՝ գիտություն, արվեստ, մանկավարժություն, կենցաղ, իմաստասիրություն և այլն:

Չնայած վերջին տարիներին հայ իմաստասիրական մտքում հայտնված հետազոտություններին՝ կենսատու բարոյագիտությունը հայ գիտական հասարակայնության կողմից դեռևս մնում է քիչ ուսումնասիրված: Նորույթ լինելու պատճառով այն երբեմն շփոթում են կրոնի կամ գաղտնուսմունքի հետ: Սակայն վերջին իմաստասիրական հրապարակումները ցույց են տալիս, որ կենսատու բարոյագիտությունը ունի գիտությանը բնորոշ հատկանիշներ. մարդու գիտելիքների համակարգ է բնության, հասարակության և մտածողության մասին: Այն տեսական գիտելիքների համակարգ է աշխարհի, նրա առարկաների, երևույթների ու գործընթացների մասին: Այնտեղ աշխարհը, իրականության բոլոր կողմերը, առարկաներն ու գործընթացներն արտացոլվում են օրենքի և գիտական հասկացության մակարդակով, որոնց ճշմարտացիությունը ստուգվում է փորձառությամբ: Այն իմաստասիրություն է, բայց

ոչ սովորական, քանի որ օգտագործում է նաև ներըմբռնողական, զգացա-
իմացական ճանաչողության եղանակը և օգտվում է վերերկրային գիտելիքի
աղբյուրներից:

Եվ այսպես, կենսատու բարոյագիտությունը գիտություն է, ունի իր ի-
մաստասիրությունը: Սակայն, եթե խնդրո առարկա ուսմունքի ասպարեզի
վերաբերյալ կան ուսումնասիրություններ, ապա նույնը չի կարելի ասել
նրա էության, բնույթի մասին: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել
կենսատու բարոյագիտության ուսմունքի իմաստասիրական կողմերը և
վերլուծել դրանցից մի քանիսը:

Բնական է որևէ բանի վերլուծությունը սկսել նրա անվանումից: Ուս-
մունքը կոչվում է Կենսատու բարոյագիտություն, ռուսերենում՝ «Живая
этика»: Այս անվանումը կենսատու բարոյագիտության հեղինակները մեկ-
նաբանում են այսպես. «Իմաստն ու նշանակությունը դուրս են մղված բա-
րոյագիտական շատ հասկացություններից, այդ պատճառով այնքան հե-
ռու է կյանքի բարոյագիտությունը կյանքից, և այն դարձել է մեռած: Տալիս
ենք կյանքի կենդանի՝ բարոյագիտությունը՝ Լույսը հաստատող և դեպի
կյանքը տանող»¹: Կենսատու բարոյագիտությունը ուղեկցում է դեպի ան-
սահմանություն, այդ պատճառով են այն անվանում Կենդանի, Կենարար,
Կենսատու բարոյագիտություն, կամ՝ Կյանքի ուսմունք, Լույսի ուսմունք,
Կրակի ուսմունք, Զրեղեն միավորում կամ Զրե միավորում: Ուսմունքը կեն-
սական է, այսինքն՝ ապրող, կենարար է, այսինքն՝ կյանք արարող, կենսա-
տու է, այսինքն՝ հետևողներին կյանք տվող, և այդ պատճառով կոչվում է
Կյանքի ուսմունք, Կենսատու բարոյագիտության ուսմունք:

Սակայն եթե բարոյագիտությունը մեռած է, իսկ հասարակության մեջ
բարոյականության ապահովման հիմնական հաստատություններից մեկը
քրիստոնեական եկեղեցին է, ապա եկեղեցու և Քրիստոսի ուսմունքների
միջև տարբերությունը շեշտելու համար կենսատու բարոյագիտության հե-
ղինակներն ասում են, թե «Քրիստոսի ուսմունքը ոչնչով չի շեղվում կենսա-
տու բարոյագիտության ուսմունքից, և ինչպես կարող է դա լինել, երբ մեծ
ուսուցիչներն իրենցից ներկայացնում են միասնական ես, այնպես մեծ է
նրանց փոխադարձ ոգեղեն ազդեցությունը»²:

Չնայած կենսատու բարոյագիտության անունները հավասարազոր
են, սակայն նրա հիմնական անվանումն է Զրե միավորում, ռուսերենում՝
«ագնի յոգա»: «Չենց կրակի տարերքն է անվանում տալիս այս անձնու-
րաց Միավորմանը»³: Նկատի է առնվում այն կրակը, որը կա ամենուրեք,
ամեն ինչում, այն եռանդուժը (էներգիան), որը նախանյութի հիմքն է, նյու-
թական և աննյութական ամեն ինչի էությունը: Որակյալի հիմնական հատ-
կությունը նրա անսահմանությունն է, և որակը հաստատված կրակն է:
Մարդու մեջ կրակների զորության ուժգին, անսասան, աննկուն հաստա-
տումն էլ հրե միավորումում համարվում է ուղին դեպի անսահմանություն:
Իսկ հրե միավորման հետևողն էլ կոչվում է հրե միավորվող կամ հրե ոգի:

¹ «Грани Агни Йоги». Т. 2. Фрагмент 540, Новосибирск, 1994.

² «Письма Елены Рерих 1932 – 1955». Т. 3. Письмо от 07.05.39. Новосибирск, 1993.

³ «Ագնի յոգայի նշանները», Եր., 1997, հատված 158:

Կենսատու բարոյագիտությունում ամփոփված է հազարամյակների ընթացքում մարդկության կուտակած իմաստությունը, որի շնորհիվ ուսմունքը նաև անվանվում է Իմաստության օվկիանոս: «Իմաստության օվկիանոս է տրվում մարդկությանը», – կենսատու բարոյագիտության մասին գրում է Ելենա Ռերիխը: Իսկ ուսմունքի տված գիտելիքի յուրաքանչյուր հատիկը այդ օվկիանոսից կաթիլ է, որ ցողվում է մարդկային հոգու պապակ շուրթերին: Ուսմունքի օվկիանոսն իրականում անսահման է:

Չեղինակները խորհրդածում են ուսմունքի անվանումների մասին՝ թվարկելով այն բոլոր հնարավոր տարբերակները, որոնք կարող են ճշգրիտ բնորոշել նրա էությունը, բնությունը, բովանդակությունը: Օրինակ, «...Կարելի է համեմատել հրե միավորումը Առավոտի Աստղի հետ, որն ազդարարում է լույսի մոտիկությունը»⁴: Ուսմունքի հեղինակները նաև թույլ են տալիս օգտագործել Նվիրապետություն (հին հունարեն՝ հիերարխիա) բառը, քանի որ ուսմունքը ստացված է նվիրապետությունից, հետևաբար՝ իր բնույթով նույնն է: Նվիրապետությունը կանոնավոր համագործակցություն է: Ուսմունք սրտի մասին անվանումը ցույց է տալիս սրտի հրեղենությունը, արևայնությունը: Ուսմունքը կարող է կոչվել Մտքի նախագուշակում, քանի որ պատասխանները կգան մտքի բուն զարգացման մեջ: Սիրո միավորումը ամենակարճն է, բայց այն իրավամար կարելի է անվանել Սրտի միավորում: Չրե միավորումը կարող է կոչվել Կայծակնային միավորում: Չրե միավորումը երբեմն անվանվում է Մտածողական միավորում, որպեսզի հաստատվի նրա մտածողական հիմքը՝ ի տարբերություն մարմնական տանջանքներ պահանջող միավորման: Ուսմունքը կոչվում է նաև Լույսի ուսմունքի պատվիրանների միավորում, որովհետև հետևորդները չպետք է բավարարվեն տեսական իմաստախոսումով (փիլիսոփայումով), այլ պիտի գործնականում խստորեն կիրառեն ուսուցիչների հրահանգները: Ուսմունքը կոչվում է Կյանքի ուսմունք՝ հեռու պահելու համար ամեն մի վերացական տեսականացումից և խրախուսելու համար կյանքում դրա կիրառությունը: Կյանքի ուսմունք անվանումը շեշտում է ոգու հավերժական կյանքը և ցույց է տալիս չընդմիջվող գիտակցության վիճակին, այսինքն՝ անմահությանը հասնելու ուղին: Ուսմունքը կոչվում է Ոգու թևեր, որովհետև թևերով կարելի է թռչել: Այս ուսմունքը կարելի է անվանել Ազատության ուսմունք, քանզի նրանում չկա պարտադրանք. մարդիկ իրենք են իրենց ազատ կամքով որոշում մտնել ուսմունքի մեջ, գնալ նրա ուղիով: Բացի այդ, նրանք այստեղ տեսնում և զգում են շղթաների ծանրությունը, գիտակցում են իրենց ստրկությունը և դեն նետում իրենց շղթաները, դառնում ազատ մարդ: Ահա թե ինչու է Կյանքի ուսմունքը կոչվում Ազատության ուսմունք: Կրակի երեխաները դառնում են ազատության որդիներ: Այս ամենի ամփոփումը կարծես տալիս է Ելենա Ռերիխը. «Ինքը՝ Տիրակալը, ուսմունքն անվանում է Կենսատու բարոյագիտության հիմունքներ»⁵: Սակայն թվարկվածները միայն մի քանիսն են ուսմունքում հանդիպող 252 անուններից ու անվանումներից:

Անհրաժեշտ է ընդգծել այն իրողությունը, որ կենսատու բարոյագիտության ուսմունքը անմիջական կապ ունի աստվածիմաստության հետ,

⁴ Նույն տեղում, հատված 169:

⁵ «Письма Елены Рерих 1932 – 1955». Письмо от 17.05.34.

այն բխում է նրանից: Այդ մասին վկայում են ուսմունքի հեղինակները: Աստվածիմաստության սկզբնաղբյուրներում շարադրված են գաղտնագիտական իմաստասիրության գերբնագիտական հիմունքները: Դրանց հիմքի վրա հետագայում բարձրացան աստվածիմաստության և կենսատու բարոյագիտության հեղինակների գոյաբանական, իմացաբանական, տիեզերածնական և այլ իմաստասիրական հայացքները: Եվ քանի որ աստվածիմաստության և կենսատու բարոյագիտության ուսմունքների հեղինակները նույնն են, կարելի է ասել, որ կենսատու բարոյագիտությունը աստվածիմաստության շարունակությունը, զարգացումն է:

Ըստ Ելենա Ռերիխի՝ «Ժամանակակից գիտությունը արագ քայլերով ընդառաջ է գնում արևելյան իմաստասիրությունում և կրոններում շարադրված բոլոր մեծ ճշմարտություններին, և շատ շուտով նրանք կհանդիպեն ու ձեռք կնեկեն իրար»⁶: Կենսատու բարոյագիտության ուսմունքի պատկերացումներին համադրելի են ժամանակակից որոշ ֆիզիկոսների հայտնագործությունները բնագիտության ասպարեզում: Ակադեմիկոս Ա. Ե. Ակիմովը գտնում է, որ «առաջին անգամ ընդհանուր շփման կետեր են հայտնվում իրարից այնքան հեռու կանգնած գիտելիքների միջև, ինչպիսիք են առասպելը և ժամանակակից գիտական պատկերացումները»⁷:

Խոսելով ուսմունքի մասին՝ հարկավոր է նշել նրա եղանակաբանական մի առանձնահատկության մասին: Ուսմունքի գրքերն ընթերցելիս յուրաքանչյուր անգամ նոր մանրամասնություն է մտցվում: Պետք է դուրսբերումներ կատարել հետևողականորեն, միայն այդ ժամանակ են նկատվում ազդարարման գալարի պտույտները: Ազդարարման գալարի եղանակի առանձնահատկությունն էլ խորհուրդներն ու հրահանգները իրար կողքի շարելն է, ինչպես թելի վրա: Գալարը բարձրանալով կրկնում է փաթը փաթի ետևից, բայց ավելի բարձր մակարդակի վրա: Ընդհանրապես, ցանկացած շարժում գալարագիծ է: Գալարի յուրաքանչյուր նոր պտույտ նոր տարրեր է պարունակում, որոնք լրացնում են նախորդը: Գրառումների գալարածև կառուցման եղանակով են գրված Կենսատու բարոյագիտության կամ Զրե միավորման գրքերը:

Կենսատու բարոյագիտության ուսմունքի իմաստասիրությունը ներկայացնելու համար անհրաժեշտ է ծանոթանալ նրա հասկացություններին, սկզբունքներին, պատկերացումներին, իմանալ տեսակետները գոյաբանական և իմացաբանական կարևոր հարցերի մասին, վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Կենսատու բարոյագիտության իմաստասիրման հիմնական առարկաներից մեկն է ոգին: Ուսմունքի գրքերում ոգու հոմանիշներն են հրեղեն հատիկը, բարձրագույն արարչությունը, ոգեղեն մարմինը, նախամիավորը, Աստվածը, ոգեմիջուկը, հոգեկան եռանդուժը: Ոգու մասին կենսատու բարոյագիտության տեսակետն իմանալու համար անհրաժեշտ է ետ գնալ դեպի ամենասկիզբը: Ոգին առաջին բաժանումն է Նրա, որը ամենա-

⁶ «Письма Елены Рерих 1929–1938». В 2 т. Т. 1. Письмо от 01.02.35. Минск, 1992.

⁷ **Акимов А. Е.** Облик физики и технологий в начале XXI века: Выступление на науч.-пед. конф. «Идеи Живой Этики и Тайной Доктрины в современной науке и практической педагогике». М., 1999, с. 8.

սկզբում էր, որն անճանաչելի է, անհիմանալի: Ոգին Նրա առաջին շնչառությամբ է, առաջին արտաշնչանքը, առաջին ստեղծագործությունը, հրեղեն հատիկը: Դա Բացարձակն է: Ոգին մշտապես փոխվող ձևերի հավերժական կրողն է: Ապարի, բույսի, կենդանու, մարդու մեջ գտնվող նախամիավորները (մոնադ) մեկ են իրենց էությամբ: Բոլոր նախամիավորները միասնական են իրենց հրեղեն բնությամբ: «Ոգին մնում է անձեռնմխելի: Ոգու հրեղեն հատիկը մնում է տարերային ամբողջականության մեջ, քանզի տարերքների նշանակությունն անփոփոխ է, բայց հատիկի ճառագույնը փոփոխվում է գիտակցության աճից: Այդպիսով, կարելի է հասկանալ, որ ոգու հատիկը տարերային կրակի մասնիկն է, իսկ նրա շուրջը կուտակված եռանդուժը գիտակցությունն է»⁸:

Ոգին ու նախանյութը միասնական են, մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ: Այդ պատճառով Արևելքի հին բացուսմունքային կրոնների աստվածներն ունեն իրենց կանայք, որոնք մարմնավորում են նախանյութը: Այսինքն՝ ոգին ու նախանյութը և՛ առանձին են, և՛ միասնական, սակայն նրանց առանձնությունը ոչնչով չի արտահայտվում, իսկ տղամարդու և կնոջ առանձնությունների միասնական, մեկ ամբողջություն լինելը լոկ խորհրդանշական է: Մեզ համար բնության մեջ ոգին ու նախանյութը միմիայն միասին են, ամրացված են այնպես, որ նրանց առանձին հատկությունների մասին խոսելն անգամ ավելորդ է և անհիմաստ: Այնպես որ, անհիմաստ է նաև իմաստասիրության ամբողջ պատմության ընթացքում մղած պայքարը նրանցից որևէ մեկի առաջնայնությունն ապացուցելու համար, որը նույնիսկ դարձել էր իմաստասիրության հիմնական հարցերից մեկը: Իրականում, առանձին վերցրած, ոգին անհիմանալի է և չի դրսևորվում առանց նախանյութի: Նախանյութը բյուրեղացված, նյութականացված ոգին է: Ոգին եռանդուժ է, իսկ եռանդուժը չի կարող դրսևորվել նախանյութից դուրս: Ոգին գործում է նախանյութի միջոցով, կամ նախանյութին շարժողը ոգին է: Մեկն առանց մյուսի չկա և չի կարող լինել: Այդ պատճառով ոգի է կոչվում ոչ թե նրանցից մեկը, այլ երկուսի միասնությունը: Բայց, քանի որ այդ երկուսի միասնությունը կա ամեն ինչում, ապա տարբեր տեղերում նրանք տարբեր ձևերով են կոչվում և տարբեր իմաստներ են ընդգրկում:

Ըստ կենսատու բարոյագիտության ուսմունքի՝ ոգին կառավարում է մարդու մարմնի գործունեությունը, քանի որ մարդու գիտակցությունը բավարար չէր լինի այդ գործառույթը կատարելու համար: Իհարկե, ոգին դա անում է գիտակցաբար, բայց մարդկային բառապաշարով այն կոչվում է ենթագիտակցական գործունեություն, որը կատարվում է ինքնաբերաբար: «Բավական է խորհել մտածողության կամ անդրազդման կամ մարսողության գործընթացների մասին, կարելի է հեշտությամբ նկատել նյարդային կենտրոնների դրսևորումները, բայց ինչ-որ բան միավորում է նրանց գործունեությունը գիտակցաբար, չմտնելով բանականության սահմանները: Այդ մարմնամասը կոչվում է ոգի»⁹:

⁸ «Ազնի յոգայի նշանները», հատված 275:

⁹ «Կենդանի էթիկայի ուսմունք: Համայնք», Եր., 1999, հատված 221:

Մարդու մեջ եղած Աստվածը կամ Ոգին, հավերժական Վկան, աստվածային Կրակը կամ մարդու բարձրագույն հրեղեն էությունը իր հիմքում հավերժ է և անփոփոխ: Իսկ գիտակցությունը կամ հոգին, որը հավաքվում է հիմնական հրեղեն հատիկի շուրջը կուտակված եռանդուժերից, կարող է աճել և փոփոխվել:

Նախանյութը և ոգին նույնն են, սակայն նրանց միջև կա նաև տարբերություն: Նախանյութը բարձրագույն են է: Այն կազմված է վեցերորդ ու յոթերորդ սկիզբներից և գիտակցական էությունն է դրսևորման հարթություններում: Ոգին սեռ չունի, սեռը ձևերի աշխարհի հատկությունն է: Տիեզերքի ամեն ինչում, բնության հիմքում արական և իգական սկիզբներն են, հակադիր բևեռները: Հայրն ու մայրը ոգին ու նյութահիմքն են: Ուստի վերերկրային ոլորտներում ապրողներին ոգիներ անվանելը ճիշտ է, ճիշտ է բնակիչներ անվանելը:

Քանի որ մարդկությունը դեռ չի հայտնաբերել նրբագույն եռանդուժը՝ հոգեկանը, պարզեցման համար այն առայժմ ոգի են անվանում: Հարկավոր է նշել, որ ներկայումս նման հետևությունների են հանգում նաև գիտնականները: «Դեռևս մ. թ. ա. 4000 - 2000 թթ. թվագրված Վեդաներում նշվում էր, որ գոյություն ունի ինչ-որ առաջնային սկզբնաճախանյութ, որից ծնվում է ամեն ինչ, և որին վերադառնում է ամեն ինչը: Պետք է ասել, որ այժմ օդագրության (վակուում) գիտական հայեցակարգում այդ կանխադրույթը լրիվ իմաստալից հասկացողություն է ձեռք բերում»¹⁰:

Իմացության տարբեր համակարգերում ոգին մեկնաբանվում է մի քանի տեսանկյուններից կամ կողմերից՝ աստվածաբանական, առասպելաբանական, մարդաբանական, հոգեբանական, բնագիտական, ոգեկոչուսմունքային, բարոյագիտական, մշակութային, իմաստասիրական, տիեզերածնական: Դրանք արտահայտում են ոչ միայն իմաստասիրությունում, այլև ընդհանրապես մարդկային մշակույթում ոգու իմացաբանության անհնարինության կամ դժվարության պատճառով եղանակաբանական (մեթոդաբանական) դաշտում եղած տարբեր դրսևորումներն ու պատկերացումները ոգու մասին: Ոգին մեկնաբանվում և անվանվում է տարբեր կերպ:

Աստվածաբանությունում Սուրբ Ոգին (հայոց լեզվում՝ Հոգին) միասնական Աստծո՝ Սուրբ Երրորդության երրորդ դեմքն է, նույնպիսի Աստված Հոր և Որդու հետ միասին: Իսկ ոչ սուրբ՝ սովորական ոգին նույն հոգին է, որն անջատվում է մարմնից և օժտված է ինքնուրույն բացարձակ գոյությամբ: Առասպելաբանությունում ոգին բարի կամ չար հրեշտակ է: Մարդաբանական ոգին մարդու կառուցվածքի ստորաբաժանումներից մեկն է: Այն էություն է, որը կարող է ժամանակավորապես կամ ընդմիջտ լքել բնական մարմինը: Հոգեբանական տեսանկյունից ոգին նշանակում է մարդու հոգևոր էության կառույցի մասերից մեկը, առանձին կառույց՝ իր հատկություններով ու որակներով: Բնագիտական ոգին ինչ-որ բանի, օրինակ՝ մարդու, ժողովրդի, ազգի, երկրի, մարդկության, մոլորակի, համակարգի, տիեզերքի ներքին էությունն է: Ոգեկոչուսմունքային ոգին այնկողմնային աշխարհից եկած ուրվական է կամ հոգու հետմահու ուրվականային արտացոլանք: Բարոյագիտական ոգին հենց կյանքն է, որը սեր է: Մշակութա-

¹⁰ Акимов А. Е., նշվ. աշխ., с. 8.

յին առունով ոգին արվեստի ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունն է: Իմաստասիրական ոգին որևէ երևույթի, օրինակ՝ հերոսության, ժողովրդական, խմբակային, դարաշրջանի համընդհանուր բնույթն է, տրամադրությունը կամ վիճակը: Ոգու իմաստասիրական հասկացությունը հաճախ նույնացվում է աննյութական սկզբի հետ: Ոգին սկզբնական շարժիչ ուժ է, որը հատուկ է կենդանի ամեն ինչին, իսկ որոշ մշակույթներում էլ՝ նաև անկենդան ամեն ինչին: Ոգի ունի ամեն անհատ, ամբողջ մարդկությունը, ցանկացած մարդկային հանրություն, ամեն մի գործընթաց, գոյություն ունեցող ամեն ինչ: Իմաստասիրությունում կա նաև ոգու հասկացությունը որպես բնության հակադրություն, որը ձևավորվել է երազկոտության և հոգեպաշտուսմունքի ժամանակաշրջանում, հատկապես Յեզեչի մոտ: Ըստ Դրեյերի՝ ոգին միացնում է երկինքն ու երկիրը, բարին ու չարը: Կլազեսը գտնում է, որ ոգին հոգու հակառակորդը չէ, հոգին ոգու կրողն է: Իմաստասիրությունում ոգին կարող է լինել անձնական, առարկայական, առարկայացված: Անձնականը անհատին է, առարկայականը՝ ընդհանուրը, առարկայացվածը՝ ոգու արարումներն են: Իմաստասիրության պատմությունում ոգին որպես հասկացություն ընդհանրացվել է այն ամենը կրողի հետ, ինչը օրինաչափ, նպատակադիր բնույթ է տալիս աշխարհի երևույթներին, շնչավորում է անկենդան բնությունը: Նյութապաշտական իմաստասիրությունը մեկնաբանում է ոգին որպես թե գիտակցությունը իր հոգևոր կյանքի տարբեր ոլորտներով՝ ինքնագիտակցությունը, գաղափարական, հոգեկան, հասարակական գիտակցության ձևերը: Առարկայական հոգեպաշտուսմունքը բացարձակացնում է բնության այդ գործուն կողմը՝ որպես առաջնային բնության նկատմամբ: Գերմանական իմաստասիրությունում՝ հեգելականության, նորկանտակա-նության մեջ, կան ոգու իմաստասիրությունը և ոգու մասին տեսությունները: Իմաստասիրության ասպարեզում կենսատու բարոյագիտության գաղափարները նախամիավորների մասին ինչ-որ չափով համահունչ են պատմական տարբեր իմաստասիրական համակարգերի հարող իմաստասերների մեկնաբանություններին, օրինակ՝ պլուրազորականների, պլուրալիզմի և պերսոնալիզմի հետևորդների, Ջ. Բրունոյի և, մանավանդ, Գ. Լայբնիցի և այլոց:

Կենսատու բարոյագիտության տեսությունը ոգու մասին ավելի սպառնիչ պատասխաններ է տալիս կյանքի զանազան հարցերին, բացատրություններ է տալիս այն հարցերին, որոնց պատասխանները տալ չկարողանալը կրոնի կողմից արդարացվում է՝ հղում կատարելով Աստծո կամքի վրա: Օրինակ, մարդկանց միջև զարգացման տարբերությունները կրոնը բացատրում է շնորհներ պարգևելու Աստծո կամքով, իսկ կենսատու բարոյագիտությունում կա վերամարմնավորումների միջով անցնող ոգու փորձառության ավելացման շնորհիվ մարդկային մարմին հագած ոգու կատարելության խելամիտ (ռացիոնալ) բացատրությունը: Իսկ գիտությունը, չկարողանալով բացատրել իր համար անհասկանալի երևույթները՝ հրաշքները, նման կարգի բարդ հարցերին պատասխանում է անիմաստ ձևով, թե դրանք չեն կարող լինել, որովհետև դրանք բնության մեջ չեն կարող լինել ընդհանրապես: Սակայն գիտության պատմությունը նման չիմ-

նավորված պատասխանների հերքման ցուցադրություն է ներկայացնում իրենից՝ անընդհատ ապացուցելով, որ բնության մեջ անհնարին ոչինչ չկա: Օրինակ, անտեսանելի մոլորակների և արևների գոյությունը աստիճանաբար իրողություն է դառնում գիտության համար: Դրանք վկայությունն են անտեսանելի աշխարհների գոյության, որոնց մասին խոսվում է աստվածիմաստության և կենսատու բարոյագիտության գրքերում:

Կենսատու բարոյագիտության ուսմունքում տիեզերածնական տեսակետից ոգին առաջին ստեղծվածն է, հետևաբար ստեղծողի հետ նույն բնույթն ու էությունն ունի, և ինքն էլ իր հերթին ստեղծող է ու արարիչ: Այն համընդհանուր գոյաբանության սկիզբն է, իմացաբանական տեսակետից՝ անդրիմացական: Այն ամեն ինչի մեջ է, հետևաբար իրենով միավորում է ամեն ինչը:

Ոգու կրոնական մեկնաբանության տեսակետի հետ համեմատվող կենսատու բարոյագիտության ուսմունքի դրույթը ոգու մասին տարբերություն է դնում հոգու և ոգու միջև: Եթե բնական մահից հետո հոգու մարմինները՝ եթերայինը, զգայականը և մտավորը, նույնպես մահանում են, ապա ոգին մշտապես փոխադրվում է կյանքի դպրոցի մի դասարանից մյուսը՝ դրանով ապահովելով իր զարգացման գործընթացի գոյությունն ընդհանրապես:

Կենսատու բարոյագիտության իմաստասիրական մարդաբանության կարևոր դրույթներից է այն պնդումը, թե ոգին մարդու յոթ մարմիններից վերին երեքի ամբողջությունն է: Դրանք են ոգեմիջուկը կամ ոգու հատիկը, կամ էն, ոգեկրողը և վերգիտակցությունը: Մաքուր տեսքով ոգին հենց ոգու հատիկն է կամ կորիզը, իսկ ոգու կրողը նախանյութն է, սակայն ոգին ու նախանյութը առանձին չեն կարող գոյություն ունենալ, այդ պատճառով կենսատու բարոյագիտությունում կեցության գոյաբանական հիմունքներին է վերագրվում պնդումը ոգու և նախանյութի միասնականության մասին, որը հաճախ այդպես էլ անվանվում է՝ ոգենախանյութ: Յոթերորդ սկիզբը միասնական է, նույնն է ամենուրեք, այն կապող օղակն է ամբողջ կեցության, տիեզերքի: Հինգերորդ սկիզբը այն է, ինչը առանձնացնում է տվյալ առարկան, գոյածը մյուսներից: Իսկ վեցերորդը կապող օղակն է, կամուրջն է յոթերորդի և հինգերորդի միջև: Հինգերորդ մարմնի շնորհիվ ոչ մի ոգի նման չէ մեկ այլ ոգու, յուրահատուկ է: Մարդկանց միջև հոգևոր տարբերությունների հիմքում ոգեղեն տարբերությունն է: Կենսատու բարոյագիտությունում ասվում է. «Կարելի է նկատել երիտասարդ ոգու ձգտման տարբերությունը հին ոգու համեմատ: Երիտասարդ ոգին զուրկ է խոր ընկալումներից, որոնք կուտակվում են կյանքերի փորձից...»¹¹: Յոթերորդ սկիզբը այն է, որի մասին ոչինչ հայտնի չէ, այսինքն՝ բացարձակապես ոչինչ կամ զրո է հայտնի նրա մասին: Այլ կերպ չէր էլ կարող լինել, այլապես նա չէր լինի բացարձակը, Աստվածը, որին ոչ ոք չի տեսնում, բայց նա ամենուրեք է և ամեն ինչ է տեսնում: Մեզ համար նա չկա, զրո է: Ըստ որում՝ արդեն նույնանման հայացքներ ունեն արդի գիտության հայտնի ներկայացուցիչները: Նշանավոր բնագետ, ակադեմիկոս Ալիմովը խոստովանում է. «Պարզվում է, ժամանակակից ֆիզիկական ու մաթեմատիկական բնական օ-

¹¹ «Մորիայի պարտեզի տերևները. պայծառացում», Եր., 1999, հատված 3.6.14:

դագրկության տեսությունում նկարագրում են 7-րդ մակարդակը գրոներից կազմված նույնությունների զույգի տեսք ունեցող հավասարումներով: Տվյալ անորոշությունը թույլ չի տալիս անելու ոչ մի որոշակի հետևություն այն մասին, թե ինչպիսի հատկությունների է տիրապետում այդ նախանյութային մակարդակը: Մնացած բոլոր մակարդակների համար 1-ինից մինչև 6-րդը կարելի է կառուցել տրամաբանորեն անհակասական պատկեր, վերլուծելով իրողության այդ մակարդակները կամ նախանյութի գոյության ձևերը»¹²: Ահա թե ինչու ժամանակակից գիտությունը յոթերորդ մակարդակն անվանել է «բացարձակ ոչինչ»: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե այնտեղ ոչինչ չկա: Եթե կենսատու բարոյագիտությունն ու նրան նախորդող գաղտնագիտական ուսմունքները՝ աստվածիմաստությունը և այլք, մինչև ժամանակակից գիտության հայտնվելը պնդում էին նախանյութի յոթ մակարդակների գոյության մասին, և հիմա պաշտոնական գիտությունը հայտնաբերել է մարդկանց անհայտ 2-րդից 6-րդ մակարդակները, նշանակում է յոթերորդում էլ ինչ-որ բան կա, որն ընթանելու համար մարդու ուղեղի հնարավորություններն առայժմ բավարար չեն: Այնուամենայնիվ, գիտության ժամանակակից հնարավորությունները նույնիսկ հնարավորություն են տալիս տեսականորեն հաշվարկել այդ «ոչինչի» չափերը: Այն կազմում է տիեզերքի 95 տոկոսը: Եվ դա այն դեպքում, երբ երևացող 5 տոկոսն արդեն անսահման է: Ուրեմն մարդկությունը դեռ որքան բան ունի սովորելու:

Այդ «բացարձակ ոչինչը» հենց ոգին է: Եվ այդ ոգին կա ոչ միայն ամեն մարդու, այլև գոյություն ունեցող ամեն ինչի մեջ: Հենց այդ ոգու մասին, դեպի այն տանող ուղիների մասին, մինչև նրա սահմանները մարդկային գիտակցության ընդլայնման հնարավորության և անհրաժեշտության մասին դրույթն էլ կենսատու բարոյագիտության ուսմունքի անկյունաքարային տեսություններից մեկն է:

Աշխարհը և կյանքը թվերի միջոցով բացատրելու մաթեմատիկական մոտեցումը գալիս է դեռևս պյութագորականների ուսմունքից, որը հետևորդներ է ունեցել նաև հետագա դարաշրջաններում, օրինակ՝ ուշ Վերածննդի դարաշրջանում, երբ Կեպլերն ու Գալիլեյը բնագիտությունում սկիզբ դրեցին բնության քանակական մաթեմատիկական մեկնաբանությանը: Ջրոյում Աստծո գտնվելու մասին դրույթը նորություն է ժամանակակից գիտության համար, քանի որ աշխարհը թվերի միջոցով բացատրող բնագետները մի քանի տասնամյակ առաջ նրան վերագրում էին յոթ թիվը: Սակայն այդ կարծիքը հիմնված էր աշխարհի յոթնաստիճան կառուցվածքի իրողության վրա միայն՝ չաբաթվա յոթ օր, մահվանից հետո յոթ օր, յոթ ձայնանիշ, յոթ աշխարհ, որոնց մասերը ներկա են մարդկային մարմնում, մարդկության մեջ մարդու կյանքի յոթ շրջան յոթ մարդացեղերում (ռասա), իրողության յոթ աստիճան և այսպես շարունակ:

Կենսատու բարոյագիտության եղանակաբանական սկզբունքների հետ համահունչ են ուսմունքում ոգու զարգացման ուղու ընդգծումը և կարևոր շրջադարձերի ու կանգառների շեշտադրումները: Ուսմունքի հեղինակները հետևողականորեն տանում են ընթերցողի միտքը ուզու շարժ-

¹² Акимов А. Е., նշվ. աշխ., с. 10.

մանը համընթաց: Այդպիսի հանգուցային կետերից մի քանիսն են ոգու ուժերը, ոգու ուղիները, ոգու մաքառումը, ոգու ընդվզումը, ապստամբությունը, թրթռոցը, հաղթանակը, վերածնունդը, աճը, պսակը, համբարձումը, հարությունը և այլն: Օրինակ, կենսատու բարոյագիտության հեղինակների տեսակետից՝ «ոգու ուժերը ոգու հենց այն հոսանքներն են, որոնց միջոցով տեղ են հասնում տարբեր եռանդուժերը: ... Ոգու ուժերը գործելու զորություն են հաղորդում ներզգացողությանը: Ոգու հոսանքները կապ են վերին ուժերի հետ: Երբ հզոր եռանդուժերը հագեցնում են էությունը, ապա իրականացվում է բոլոր բարձրագույն կենտրոնների զարգացումը: ... Ուստի այնքա՛ն կարևոր է հրեղեն աշխարհի ճանապարհին զանազանել այդ հոսանքները, քանզի գիտակցական վերաբերմունք է պետք գործադրել ամեն ինչի նկատմամբ՝ գտնելու համար անտեսանելի հրե աշխարհի հետ կապը: Այդպես ոգու ուժերը կարող են, իրոք, աշխարհներ նվաճել»¹³: Այսպիսով, ոգու ուժերը բնութագրող հանգուցային հասկացություններն են եռանդուժերը, ներզգացողությունը, վերին ուժերը, բարձրագույն կենտրոնները (մարդկային մարմնի), գիտակցական վերաբերմունքը և, վերջապես, հրե աշխարհը: Վերջինը կարծես բոլոր նախորդների ամփոփումը լինի:

Ոգու ուղիների վերաբերյալ կենսատու բարոյագիտության հեղինակների տեսակետները շեշտում են յուրաքանչյուր մարդու մեջ գործող համաշխարհային ոգու իմաստությունը, որը, միևնույնն է, շուտ, թե ուշ գտնում է անհրաժեշտ, ճիշտ, դեպի վերջին նպատակակետը տանող ուղիները, սակայն կենսատու բարոյագիտության ուղին դրանցից ամենակարճն է, հետևաբար՝ ամենաիմաստունը: «Մարդկության պատմությունից կարելի է տեսնել, թե ինչպես մարդկանց ոգին գտնում է Լույսը տանող ուղին: Ոգու ջահը գտնում է ուղին իրեն բնորոշ առանձնահատկություններով»¹⁴: «Երբ ոգին բնականորեն հաղորդակից է դառնում բարձրագույն աշխարհին և բոցավառում է սրտի մի շարք ջահերը, ապա դա կարելի է անվանել ճիշտ ուղի»¹⁵: «Հրե ուղին կլուսավորի ամենակարճ ճանապարհը»¹⁶:

Ոգու մաքառումը կենսատու բարոյագիտությունում մեկնաբանվում է որպես մի երևույթ, որին նախորդում են անբավարարվածության զգացումը, որոնումները, թախիծը, իսկ հաջորդում են համադրումը, ապաքինումը, ապագայի իմացությունը, հրեղեն մկրտությունը: «Հրեղեն մկրտությունը ոգու մաքառում է ենթադրում: ... Ոգու մաքառումը մի քայլ է դեպի ապաքինում: ... Լարված որոնումները հանգեցնում են ոգու մաքառմանը: ... Հրեղեն աշխարհի ճանապարհին անհրաժեշտ են համադրում և ոգու մաքառման երևույթ»¹⁷: «Ոգու մաքառումների շարքում հարկ է առանձնապես նշել անբավարարվածության զգացումը: ... Հրեղեն մաքառումների մեջ ոգին թախիծ է դրսևորում: ... Թախիծը նուրբ աշխարհի երևույթ է, և անբավարարվածությունը ապագայի իմացություն է»¹⁸:

¹³ «Ազնի Յոզա: Հրեղեն աշխարհ», մաս 3-րդ, Եր., 2006, հատված 119:

¹⁴ «Ազնի Յոզա: Հրեղեն աշխարհ», մաս 1-ին, Եր., 2006, հատված 622:

¹⁵ «Հիերարխիա: Կենդանի էթիկայի ուսմունք», Եր., 2000, հատված 187:

¹⁶ «Մորիայի պարտեզի տերևները. պայծառացում», հատված 2.2.7:

¹⁷ «Ազնի Յոզա: Հրեղեն աշխարհ», մաս 3-րդ, հատված 32:

¹⁸ Նույն տեղում, հատված 34:

Ոգուն կենսատու բարոյագիտությունում այնքան մեծ դեր է հատկացվում, որ ենթադրելի է, թե ապագայի ուսմունքը հիմնված կլինի ոգու ձեռքբերումների վրա: Ընդհանրապես, մարդկանց բնագարգացման գործընթացի նպատակը ոգու զարգացումն է, այսինքն՝ հինգերորդ և վեցերորդ մարմինների ավելի սերտ կապը՝ միաձուլումը յոթերորդի հետ: Դա կլինի ոգեղեն ազատագրումը, ոգու ինքնաիրացումը, ոգու կատարելությունը, գոյի նպատակին հասնելը, քրիստոնեական հասկացություններով՝ Չորը նմանվելը, Աստված դառնալը: Ճիշտ է, բարձրագույն նպատակին՝ Բացարձակ վիճակին հասնելը մեկ կյանքի ընթացքում անհնար է, դրա համար անհրաժեշտ է անցնել մարդկության կյանքի բոլոր շրջանների միջով, սակայն նպատակադրումը և այդ ուղղությամբ աշխատանքի սկսումը միշտ էլ ժամանակին կլինեն: Այդ ուղու վրա յուրաքանչյուր կյանքի ձեռքբերումները կլինեն նոր մարմնական, հոգեկան, ոգեղեն և այլ կարողությունների ու ընդունակությունների ձեռքբերումները, որոնք մարդիկ միշտ հրաշքներ են համարել:

Կենսատու բարոյագիտությունում նշվում է, որ ապագա դարաշրջանի ուսմունքը կլինի ոգու միացումը մտավոր մարմնի կամ խելքի հետ: Մտավոր մարմինը չորրորդն է վերևից և ներքևից՝ մեջտեղինը: Վերը նշվեց, որ ոգու կատարելության աստիճանը ձեռք կբերվի, երբ նրա բոլոր մարմինները՝ վեցերորդն ու հինգերորդը, լիարժեք կապված, միացված կլինեն յոթերորդին: Իհարկե, դա ենթադրում է, որ մինչ այդ լիակատար կապ կլինի նաև նախորդ բոլոր մարմինների հետ. չորրորդի՝ մտքի, երրորդի՝ զգայական մարմնի, երկրորդի՝ եթերայինի և առաջինի՝ բնական մարմնի: Սակայն առաջմ միայն չորրորդի՝ խելքի հետ կապի մասին կենսատու բարոյագիտության հեղինակները արտահայտվում են որպես ապագա դարաշրջանի ուսմունքի նպատակ: Իսկ զարգացման շարժման ուղղությունը ներքևից վերև է: Այսինքն՝ մարդկության մեծ մասը դեռևս զգայաշխարհից դեպի մտաշխարհ անցման փուլի շեմին է գտնվում: Թերևս միայն մարդկության փոքրիկ մասը կազմող գիտական, մտավորական աշխատողների մասին կարելի է ասել, թե նրանք սկսել են իրենց մտավոր մարմնի զարգացման գործընթացը՝ այդպիսով առաջ անցնելով մյուսներից: Այդ տեսակետից, հաջորդ մեջբերումը հաստատումն է և՛ վերջին դրույթի ճշմարտացիության, և՛ կենսատու բարոյագիտության հիմնարար դրույթներից մեկի՝ աշխարհի յոթնաստիճան կառուցվածքի մասին դրույթի, քանի որ այն արտահայտում է գիտնական այրերի հիմնավոր տեսակետը: «Մաթեմատիկորեն նմուշավորվում է աշխարհի մասին պատկերացումը որպես մի համակարգի՝ բաղկացած իրողության յոթ աստիճաններից: Հենց այդպես են այն նկարագրում վեդայական և գաղտնագիտական սկզբնաղբյուրները»¹⁹:

Ապագայում ոգու ուսմունքը կկանգնի նախանյութի կողքին: Միայն ոգին գիտի, թե ինչպես կարելի է հաստատվել տիեզերական ձգարի (մագնիսի) ուղեծրում, և հրեղեն ազդակը հաստատում է հրե միավորման ուսմունքը: «Նրբագզաց հրե միավորվողը գիտի անսահմանության գիտակցման բոլոր ուղիները: Չէ՞ որ ոգու գիտելիքը կարող է կյանքի գիրքը, և դարերի իմաստությունը շերտադարսվում է կուտակումներով գավա-

¹⁹ Акимов А. Е., նշվ. աշխ., с. 9.

թում...»²⁰: Խոսքը մարդու մարմնի մեջ եղած մարմնամասի մասին է, որը կենսատու բարոյագիտությունում կոչվում է գավաթ: Բոլոր ուսմունքներում նշվում է մեծ մարմնի բեռի մասին՝ սևեռելու համար ուշադրությունը ոգու առավելությունների վրա: Յուրաքանչյուր դրական ուսմունք նվիրատվության պատվիրան է տալիս: Չի կարելի հասկանալ լոկ փողային նվիրատվություն կամ ոչ պետքական առարկաների. իսկական նվիրաբերումը ոգով է: Կյանքի բարոյագիտությունը ուղեկցում է դեպի անսահմանություն՝ հաստատելով ոգու կյանքը Երկրի վրա և աշխարհներում: Անցյալը բանտապահ է ոգու համար: Ուսմունքն այն դեմ է գցում: Ոգին ազատվում է իր շղթաներից: Ուսմունքի լույսով պայծառացած ազատ կանքը փորձում է բարձրացնել ոգին ավելի ու ավելի վեր, բայց անցյալ գործերի ճակատագիրը ամուր պահում է նրան նախկին սահմանափակումների շրջանակներում, որտեղից էլ առաջանում է պայքարը: «Արտաքին հարվածներն ու արտաքին կորուստը նշանակություն չունեն, եթե կոտրված չէ ոգին: Ոգով և ոգում այդ դիմադրության մասին, ոգու այդ անկոտրում դիմացկունության մասին է խոսում կենսատու բարոյագիտության ուսմունքը և դրան է կոչ անում նրանց, ովքեր հասկացել են աշխարհի նկատմամբ հաղթանակի եությունը»²¹:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է անել հետևյալ հետևությունները:
1. Աստվածիմաստության և կենսատու բարոյագիտության ուսմունքների հեղինակները նույնն են: Երկու ուսմունքների շատ հայեցակարգեր համընկնում են: Սակայն կենսատու բարոյագիտությունն ավելի կատարելագործված ուսմունք է, տրվել է գիտակցությամբ ավելի պատրաստված մարդկությանը և ավելի մեծ ուշադրություն է դարձնում նրա բարոյական դաստիարակությանը և մշակույթի զարգացմանը: 2. Ժամանակակից բնագիտությունը աստիճանաբար հաստատումներ է հայտնաբերում արևելյան իմաստասիրությունների հայտարարած ճշմարտություններին: Գիտությունն ավելի ու ավելի է համոզվում, որ կրոններում և առասպելներում անապացույց ձևով տրված է կյանքի իրականությունը տեսանելի և անտեսանելի աշխարհների փոխհարաբերությունների մասին: 3. Ոգին կենսատու բարոյագիտության ուսմունքի իմաստասիրության հիմնական հասկացություններից է: 4. Ոգին տիեզերքի առաջացման առաջին գոյն է, առաջին «է»-ն, այսինքն՝ այն, ինչը հայտնվել է նրանում: 5. Ոգին ու նախանյութը միասնական են, մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ: 6. Ոգու միջուկը տարերային կրակի մասնիկն է: Ոգու միջուկի շուրջը կուտակված էռանդուժը գիտակցությունն է: 7. Ոգին մարդու յոթ մարմիններից վերին երեքի ամբողջությունն է: Դրանք են՝ ոգեմիջուկը, ոգեկրողը և վերգիտակցությունը: 8. Ըստ կենսատու բարոյագիտության ուսմունքի՝ ապագայի ուսմունքը հիմնված կլինի ոգու ձեռքբերումների վրա: Ապագա դարաշրջանի ուսմունքը կլինի ոգու միացումը մտավոր մարմնի կամ խելքի հետ: 9. Կենսատու բարոյագիտության ուսմունքի անկյունաքարային տեսություններից մեկն է դրույթը ոգու մասին, դեպի այն տանող ուղիների մասին, մինչև ոգու սահմանները մարդկային գիտակցության ընդլայնման հնարավորության և անհրաժեշտության մասին:

²⁰ «Ազնի Յոգա: Անսահմանություն», մաս 2-րդ, Եր., 2008, հատված 900:

²¹ «Грани Агни Йоги». Т. 9. Фрагмент 49. Новосибирск, 1996.

ГЕГАМ ХАЧАТРЯН – *Философия Живой Этики о духе.* – Современная физика постепенно подтверждает истины восточных философий. Наука всё более убеждается, что в религиях и легендах, пусть и бездоказательно, предстают реальные взаимоотношения видимых и невидимых миров. Теософия и Живая Этика – во многом тождественные учения. Многие их концепции совпадают. Однако Живая Этика – более совершенное учение, требует более подготовленного сознания и обращает больше внимания на моральное воспитание человечества и развитие культуры. Одним из основных понятий Живой Этики является дух. Дух – первая сущность при возникновении Вселенной, т. е. то первое, что в ней появилось. Дух и материя едины и не могут существовать порознь. Ядро духа является частью стихийного огня. Энергия, накопленная вокруг этого ядра, – сознание. Дух – совокупность трех верхних тел человека из семи. Это атма, буддхи и манас. Согласно Живой Этике учение будущего будет основано на завоеваниях духа и соединит дух с ментальным телом, или умом. Краеугольная теория Живой Этики – положение о духе, о путях, ведущих к нему, о возможности и необходимости расширения человеческого сознания до границ духа.

GEGHAM KHACHATRYAN – *The Philosophy of Live Ethics about Spirit.* – Contemporary official physics gradually opens affirmations of truth of eastern philosophies. The science is convincing at a continually increasing rate that in religions and legends the reality of visible and invisible worlds is given unproven. The authors of Theosophy and Live Ethics are the same. Many of the concepts of both doctrines are the same. But Live Ethics is a more perfect doctrine, is given to humanity of more prepared consciousness and pays more attention to its moral education and cultural development. One of the basic concepts of philosophy of Live Ethics is the spirit. Spirit is the first entity in the appearance of universe, i. e. the first entity that appeared in it. Spirit and matter are one; one can not exist without the other. The hard core of spirit is the part of spontaneous fire. Energy stored around the hard core of the spirit is consciousness. Spirit is a collection of the top three of the seven bodies of a man. Those are the atma, buddhi and manas. According to Live Ethics the doctrine of the future will be based on the conquests of spirit. The doctrine of the future era will be the connection of the spirit with the mental body or mind. One of the cornerstones of the theories of Live Ethics doctrine is the thesis about spirit, about the way leading to it, about the opportunity and necessity of expanding the human consciousness to the borders of spirit.